



ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գործադիր տնօրենի գործունեության գնահատման համակարգը հիմնվում է Ընկերության ռազմավարական նպատակներին հասնելու նրա անձնական արդյունքների վրա, որը հանդիսանում է տնօրենի գործունեության իրականացման առաջնահերթ խնդիրը:

2. Ընկերության երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակներին հասնելու գծով Գործադիր տնօրենի արդյունավետ գործունեության հետևյալ քանակական և որակական ցուցանիշները.

3. Քանակական ցուցանիշները.

3.1. Քանակական ցուցանիշները արտացոլում են Ընկերության առջև դրված խնդիրներին և նպատակներին հասնելու մակարդակը, մասնավորապես.

ա) Ապահովագրական գործունեության գծով պլանի կատարման մակարդակը՝ տոկոսային արտահայտությամբ.

բ) Ընկերության ռազմավարական ֆինանսական արդյունքներին հասնելու մակարդակը.

գ) Ընկերության աշխատակիցների կողմից ապահովագրական և ֆինանսական գործունեության գծով սահմանված չափանիշների և կանոնների պահպանումը:

4. Որակական ցուցանիշները.

4.1. Որակական ցուցանիշներից են հանդիսանում՝



ա) Գործադիր տնօրենի մասնագիտական գիտելիքների անհրաժեշտ մակարդակը, որն անհրաժեշտ է Ընկերության ռազմավարական նպատակներին հասնելու համար,

բ) Ընկերության գործունեության վրա ազդող ներքին և արտաքին միջավայրերի ազդեցության ճիշտ գնահատումը և դրանց հաշվի առնելը աշխատանքների կազմակերպման ժամանակ,

գ) Ընկերության կողմից մատուցվող ապահովագրական ծառայությունների որակի բարձրացման և իր ներդրումն ընկերության իմիջի ձևավորման և բարձրացման գծով:

5. Գործադիր տնօրենի կողմից Խորհրդին ներկայացվող հաշվետվությունները

5.1. Ընկերության Խորհրդի կողմից սահմանված հաշվետվությունների ձևերով Գործադիր տնօրենը ներկայացնում է.

ա) “Գործադիր տնօրենի գործունեության արդյունքների վերաբերյալ” եռամսյակային հաշվետվությունները - յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 30-ը.

բ) “Գործադիր տնօրենի տարեկան գործունեության արդյունքների վերաբերյալ” հաշվետվությունը – մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը.

5.2. Գործադիր տնօրենի գործունեության արդյունքների գնահատումը կատարվում և դրա վերաբերյալ համապատասխան որոշում է ընդունվում Ընկերության Խորհրդի կողմից, հիմք ընդունելով գործադիր տնօրենի գործունեության տարեկան, առանձին դեպքերում սահմանված կարգով՝ եռամսյակային ցուցանիշները: